ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5778-Ա « 25 » նոյեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՆՅՈՒ ԴԵԼԻ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարության 16.09.2026 թվականի №1105/48276-26 գրությունը՝ Հնդկաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունից ստացված տեղեկատվական նյութերի և հրավերի համաձայն՝ Նյու Դելիի «Bharat Mandapam» համալիրում կայանալիք անվտանգ, խելացի և կայուն քաղաքների նախագծման «Municipalika 2026» 19-րդ ցուցահանդեսին մասնակցելու նպատակով և աշխատանքային պարտականությունների կատարման շրջանակներում.

1. Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ 2026 թվականի դեկտեմբերի 8-ից 12-ը ներառյալ գործուղել Հնդկաստանի Հանրապետության մայրաքաղաք Նյու Դելի՝ հետևյալ կազմով.

Անդրանիկ Թևոսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ
Արսեն Կարոյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ
Աշոտ Մաթևոսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի տեղակալ
Վահան Առուշանյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության աղբահանության և սանմաքրման բաժնի պետ

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը, այդ թվում՝ «Municipalika 2026» 19-րդ ցուցահանդեսին մասնակցության վճարը, իրականացվում են Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ Անդրանիկ Թևոսյանի և պետի տեղակալ Աշոտ Մաթևոսյանի բացակայության ընթացքում պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետի տեղակալ Տիգրան Դարբինյանին:

4. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանի և աղբահանության և սանմաքրման բաժնի պետ Վահան Առուշանյանի բացակայության ընթացքում պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետի տեղակալ Գրիգորի Ոստանիկյանին:

5. Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ